

ՀՀ ԿԳՄՍ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱՔՐԱՅԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	Գործնական հմտությունների զարգացումը շրջված դասարան մեթոդով
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝	Մարտունի
ԱՃԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝	Բեյբության Հասմիկ
ՈՒՍՈՒՑԻՉ՝	Վարուժան Խաչատրյան
ԴՊՐՈՑ՝	«Գեղիովիտի N2 միջնակարգ դպրոց»

Մարտունի-2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
Գրական ակնարկ	4

Փորձարարական հետազոտություն	8
Խմբի նկարագիրը	8
Փորձարարական դաս-1	9
Փորձարարական դաս-2	9
Եզրակացություն	11
Գրականություն	12
Հավելված	13
Դասապլան 1	13
Դասապլան 2	16

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմական գիտություն կամ **ռազմագիտություն**, գիտելիքների համակարգ պետությունների, պետությունների խմբավորումների կամ դասակարգերի պատերազմների բնույթի, օրենքների, վարման եղանակների մասին: Ռազմական գիտության տվյալներն օգտագործվում են ռազմական տեսություններ մշակելու ժամանակ: Ռազմական գիտության կառուցվածքն ու

բովանդակությունը կապված է պետության հասարակական կառուցվածքի և տիրապետող գաղափարախոսության հետ:

Ռազմական գիտելիքների զարգացման գործում կարևոր նշանակություն է ունեցել Յին Յռոմի մղած պատերազմների փորձի ընդհանրացումը: Ավատատիրության կամ Ֆեոդալիզմի ժամանակաշրջանում պատերազմներն իրենց նպատակներով և մասշտաբներով սահմանափակ էին, և ռազմատեսական միտքը մեծ զարգացում չի ստացել: Կենտրոնացված պետությունների կազմավորման (XV-XVI դար) ժամանակաշրջանում, երբ սկսել է կիրառվել հրազենը, երևան են եկել պատերազմներում և ճակատամարտերում հրազենի օգտագործման տեսություններ: Բուրժուական ռազմական գիտությունն առաջացել է XVIII դարում և նրա հիմքերը ձևավորվել են հիմնականում Ֆրանսիական հեղափոխության ընթացքում: Ռազմական տեսության մեջ կարևոր ներդրում ունեցավ Ֆրանսիական Առաջին հանրապետության բանակի գեներալ Նապոլեոն Բոնապարտը՝ հետագայում Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I-ը, որը մշակեց և հաջողությամբ կիրառեց ռազմագիտության գործողությունների նոր ձևեր ու մեթոդներ:

Չետագոտության խնդիրներն են.

- Ուսումնասիրել դպրոցականների ռազմագիտության մասին պատկերացումների ձևավորման առանձնահատկությունները;
- Ուսումնասիրել և առանձնացնել այն գործոնները, որոնք նպաստում են աշակերտների մոտ ռազմագիտության հանդեպ հետաքրքրության ձևավորմանը;
- Մշակել մեթոդական հանձնարարականներ դպրոցականների մոտ ռազմագիտության հանդեպ հետաքրքրության խթանման ուղղությամբ:

Առաջադրված խնդիրների լուծման ընթացքում կիրառվել են այնպիսի մանկավարժական մեթոդներ և գործիքներ, ինչպիսիք են աշակերտների հետ գործնական աշխատանքի իրականացումը, աշակերտների թեստավորումը և անկետավորումը, ինչպես նաև վերլուծական մոտեցումներ, որոնք թույլ են տվել ընդհանրացնել ստացված տեղեկատվությունը և համապատասխան եզրահանգումներ կատարել ուսումնասիրվող խնդրի շուրջ:

Գրական ակնարկ

Շրջված դասարան, մանկավարժական մոտեցում է, որը փոխում է ուսուցման մեթոդների ավանդական կազմակերպումը: Սովորաբար տեսական մասը առկա ուսուցման մեթոդով փոխանցվում է աշակերտներին դասարանում,

իսկ գործնական մասը կատարվում է տանը: Շրջված դասարան մեթոդի կիրառման ժամանակ տեսական մասը կատարվում է տանը՝ լսարանի հետ ավելի ինտերակտիվ ուսուցման համար հնարավորինս շատ ժամանակ շահելու նպատակով:

Այս մոդելը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում է դասարանի շրջումը: Առավել հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնում են փոքր տեսանյութեր, որոնք ուսուցիչներն իրենք են պատրաստում, իսկ աշակերտները առկա դասընթացից առաջ դրանք ուսումնասիրում են ինքնուրույն:

Ուսուցումն իրականացվում է դասի ընթացքում ուսուցչի անհատական աջակցությամբ: Դա հնարավորություն է տալիս ժամանակ խնայել ակտիվ մանկավարժական աշխատանքներ իրականացնելու, աշակերտների ըմբռնումը ստուգելու և դասընթացի հայեցակարգերը խորացնելու համար:

Շրջված դասարան մոդելի կիրառման դեպքում ուսուցիչը գիտելիքների փոխանցողի դերից անցնում է գիտելիքների միջնորդի դերի, ով փնտրում, ստեղծում և սցենարավորում է թվային ռեսուրսներ, ուղեկցողի և խորհրդատուի դերի, ինչպես նաև փոխազդեցության ստեղծողի և ղեկավարողի դերի, ով ներառում է աշակերտներին իր դասընթացի պատրաստմանը: Ինչու՞ փոխել ավանդական մոդելը: Գոյություն ունի տրամաբանական բացատրություն, որը տալիս է այս հարցի պատասխանը: Դա Բենիամին Բլումի տաքսոնոմիայի հասկացությունն է, որը բացատրում է գիտելիքների ձեռքբերման մակարդակները: Ավանդական մոդելի դեպքում դասարանում իրականացված ուսուցումը ուսուցչի կողմից փոխանցված գիտելիքների գրանցումն է (ցածր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ), իսկ հմտությունների զարգացումն ու խորացումը (ավելի բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ) սովորաբար կատարվում են դասարանից դուրս: Դասը շրջելու տրամաբանական հիմք կարող է հանդիսանալ ուսուցչին աշակերտների հետ կցելը, երբ նրանք կատարում են բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ և օգնության կարիք ունեն, և թույլ տալ, որ աշակերտները կատարեն ավելի հեշտ առաջադրանքներ հասակակիցների հետ ինքնուրույն կամ հեռակա:

Ժամանակակից ուսուցման գործելակերպը

2007 թ-ից այս մոտեցումն օգտագործվում է Միացյալ Նահանգների մանկապարտեզներում, միջնակարգ դպրոցներում, քոլեջներում և համալսարաններում: 2011 թ.-ից ի վեր, նախ Կանադայում, այնուհետև Եվրոպայում և այլ ֆրանսախոս երկրներում կիրառում են այս մոդելը:

Կոլորադոյի քոլեջի քիմիայի երկու ուսուցիչներ՝ Ջոնաթան Բերգմանը և Աարոն Սամսը համարվում են «Շրջված դասարան» մեթոդի առաջամարտիկները: Լինելով գյուղական դպրոցի ուսուցիչներ՝ նրանք աշակերտների բացակայության

չատ մեծ խնդիր ունեին: Մի օր նրանք անսպասելիորեն բացահայտեցին, որ կարող են PowerPoint-ի սլայդները ձայնագրել իրենց ձայներով, դարձնել տեսանյութեր և ներբեռնել YouTube-ում, որն այդ ժամանակ նոր էր զարգանում: Այսպիսով, 2007 թ.-ին, նրանք սկսեցին ձայնագրել իրենց դասախոսությունները և տեղադրել առցանց այն աշակերտների համար, ովքեր չէին կարողանում ներկա գտնվել իրենց դասին: Առցանց դասախոսությունները շատ արագ ներգրավեցին այլ աշակերտների, ովքեր սկսեցին նայել այդ տեսանյութերը, քանի որ դա նրանց թույլ էր տալիս ավելի լավ հասկանալ ուսուցիչների կողմից քննարկվող թեմաները, ովքեր արդեն սկսել էին օգտագործել այդ ձայնագրությունները իրենց դասաժամի ընթացքում և ձայնագրում էին իրենց ուսումնական տեսանյութերը: Արդյունքում առաջանում էր «Շրջված դասարան» մեթոդը... Արդյո՞ք դա իսկապես ժամանակակից պրակտիկա էր, և Բերգմանը և Սամսը առաջինն էին, որ օգտագործեցին այս մոտեցումը դասի ընթացքում: Այն պրակտիկան, որ ուսուցիչը պահանջում է իր աշակերտներից կարդալ տեքստը դասից առաջ, պատրաստել նյութ մի թեմայի շուրջ դասաժամին ներկայացնելու համար, որոնել փաստաթղթեր գրադարանում կամ փաստաթղթավորման կենտրոնում բոլորովին նոր չէ, և շատ ուսուցիչներ կիրառում են ամեն օր: Նորություն կարող են համարվել տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները, որոնք փոփոխություն են ապահովում և շարունակ զարգանում են: Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները ավելի ու ավելի մատչելի են դառնում իրենց հեշտ օգտագործման, ցածր գնի կան անվճար լինելու շնորհիվ: Վեբ 2.0 գործիքները թույլ են տալիս ուսուցիչներին և աշակերտներին արտահայտել իրենց կարծիքները առցանց, կազմակերպել քննարկումներ և հարցումներ և ձեռք բերել գիտելիքներ: Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումն է, որը խթանել է «Շրջված դասարան» մեթոդի, հեռակա ուսուցման, տարբեր զանգվածային բաց առցանց դասընթացների ստեղծումը՝ ներգրավվելով հազարավոր ուսանողների:

Շրջված դասարան» մոդելի առավելություններն ու թերությունները

Շրջված դասարան» մոդելի կիրառման դեպքում ուսուցչի կողմից աշակերտներին դասընթացի նյութը փոխանցվում է լսարանից կամ դասարանից դուրս՝ տեսանյութերի, ձայնագրությունների կամ կարդալու համար նախատեսված տեքստերի միջոցով: Ուսուցչի և աշակերտների փոխազդեցության ժամանակահատվածը կարող է օգտագործվել հմտություններ զարգացնող աշխատանքներ կատարելու նպատակով:

Պարզվում է, որ այս մոտեցումը լավ միջոց է աշակերտների և իրենց ուսուցիչների հարաբերությունները ամրապնդելու համար: Հաշվի առնելով այն փաստը, որ դասի տեսական մասն արդեն փոխանցվել է դասը սկսելուց առաջ,

ուսուցիչը կարող է ավելի շատ ժամանակ տրամադրել աշակերտների կողքին լինելու համար և նրանց օգնելու կատարել առաջադրանքներ այն պահին, երբ դրա կարիքն առավել շատ են զգում:

«Շրջված դասարան» մեթոդը նաև լավ միջոց է ուսուցումը դասաժամից առաջ և հետո տարբերակելու և անհատականացնելու համար: Աշակերտն այսպիսով հետևում է դասին՝ իր համար ցանկալի տեմպով: Նա կարող է դիտել տեսանյութը այնքան անգամ, որքան ցանկանում է: Աշակերտները կարող են դանդաղեցնել կամ արագացնել իրենց ուսուցման տեմպը՝ ըստ իրենց սեփական կարիքների: Ուսուցիչն ավելի շատ ժամանակ կարող է տրամադրել անհատապես կամ աշակերտների փոքր խմբերի հետ աշխատելու համար՝ նրանց առաջարկելով իրենց կարիքներին համապատասխան առաջադրանքներ:

«Շրջված դասարան»-ում աշխատանքը հիմնված է աշակերտի վրա. վերջինս դառնում է իր ուսուցման դերակատարը և մասնակցում է դասընթացի համաստեղծմանը: Այս պրակտիկայի շնորհիվ ավելի շատ ժամանակ է հատկացվում հմտությունները զարգացնելուն և խորացնելուն՝ կատարելով ավելի բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ, որոնք ավանդական դասաժամերի դեպքում կատարվում են դասերից հետո:

Ակնհայտ է, որ «Շրջված դասարան» մեթոդն ունի նաև թերություններ: Տեսանյութեր պատրաստելու համար հարկավոր է տրամադրել երկար ժամանակ: Սակայն գոյություն ունեն փոխանակման կայքեր ուսուցիչների և աշակերտների միջև, որոնք մեծապես հեշտացնում են նյութերի ձևավորման աշխատանքները: Ինչ վերաբերում է աշակերտներին, կարող ենք արձանագրել որոշ խնդիրներ՝ կապված ինտերնետային կապի և սարքավորումների բացակայության հետ:

Ինչպես արդեն նշվեց վերևում, «Շրջված դասարան» մեթոդի առավելություններից մեկը դասաժամին աշակերտի ներկայությանը նոր իմաստ հաղորդելն է: Այսպիսով, մանկավարժական տեսանկյունից ուսուցիչների համար մեծ մարտահրավեր է դասընթացների կազմակերպումը և տնային առաջադրանքների հանձնարարումը: «Շրջված դասարան» մեթոդն առաջացնում է ուսուցչի վարքագծի խոր փոփոխություններ. վերջինս ամբողջովին փոխում է կեցվածքը և դեմառդեմ մոտեցումից անցնում է կողք կողքի մոտեցման:

«Շրջված դասարան» ժամանակակից մեթոդի իրականացում

«Շրջված դասարան» ժամանակակից մեթոդի հիմնադիրներ Ջոնաթան Բերգմանը և Աարոն Սամսը պատահականորեն բացահայտեցին դասընթացների տեսանյութեր ստեղծելու հեշտ միջոց, որը նրանց դրեց «Շրջված դասարան» մեթոդի կիրառման ճանապարհի վրա: Սա համեմատաբար պարզ գործիք է, որը տեղադրված է համակարգիչներից մեծ մասի վրա: Խոսքը PowerPoint ծրագրի

մասին է: 2006 թ.-ին անշուշտ գոյություն ունեին տարբեր ծրագրեր տեսաձայնագրություններ պատրաստելու համար, բայց հենց այս ծրագիրը տարածում գտավ, քանի որ մատչելի էր և հեշտ գործածելի, և ուսուցիչները հաճախ էին օգտվում դրանից նյութեր պատրաստելու համար: Առաջին ուսումնական տեսանյութերից հետո տեխնոլոգիաները շատ են զարգացել: Մենք գտնվում ենք Վեբ 2.0 և սոցիալական ցանցերի դարաշրջանում, որտեղ հատկապես տեսանյութերի առցանց տեղադրման գործիքները և կրթական նյութերը դառնում են ավելի բազմաթիվ և նրանց հասանելիությունը դառնում է ավելի ու ավելի հեշտ և ըմբռնելի: Ավանդական դասընթացը շրջելու համար գործածվող գործիքների այս բազմազանության մեջ կարող ենք նշել 3-ը, որոնք սերտորեն կապված են այն փուլերի հետ, որոնք ուսուցիչը պետք է անցնի «Շրջված դասարան»-ի համար անհրաժեշտ կրթական նյութերը առցանց տեղադրելու համար:

- Կարճ կրթական տեսանյութեր ստեղծելու գործիքներ. խոսքը դաս-տեսանյութի մասին է, որը դասը հաղորդելու մասն է:
 - Առաջադրանքներ ստեղծելու գործիքներ՝ հիմնված ուսումնական կամ նմանատիպ տեսանյութերի վրա, որոնք կարող են ներառել տարբեր տեսակի հարցաշարեր և օգնում են ստուգելու, թե ինչքանով են աշակերտները հասկացել դասանյութը:
 - Կրթական նյութերը առցանց տեղադրելու և փոխանակելու գործիքներ, որոնք առցանց ծառայություններ են, որոնք հնարավորություն են տալիս ստեղծել աշակերտների խմբեր, հետևել և գնահատել նրանց, ստեղծել բոլորին հասանելի ծրագրեր, որոնք ուսուցիչը կարող է «օգտագործել» տարբեր տեսակի նյութեր առցանց տեղադրելու և աշակերտների հետ քննարկումներ կազմակերպելու համար:

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը գիտելիքների նվազագույն շեմը չի կարողանում բավարարել: Ես օգտվելով SRS-ների հնարավորություններից, կազմակերպեցի փորձնական դաս, որպեսզի կարողանամ բարձրացնել սովորողների հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

Այս դասարանում սովորում են 20 աշակերտ՝ 7աղջիկ և 13 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: «ՆՁՊ» առարկան անցնում են շաբաթական 1 ժամ: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ

դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր 5 աշակերտների համար, կազմակերպել անհատական ուսուցում օգտվելով դիդակտիկ նյութերից, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք նույն թեման հենվելով 5 աշակերտների պատրաստած աշխատանքների վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողությունները և հմտությունները:

Փորձարարական դաս-1


Այսօրվա դասի թեման է «Կրակոցի երևույթը և գնդակի թռիչքը»:

Չետազոտվող աշակերտները նախորդ դասին ստացել էին հանձնարարություն, ուսումնասիրել թեման եւ հաջորդ դասին պետք է ներկայացնեին թեման դասընկերներին սահիկաշարի միջոցով: Դասին նախապատրաստվելու համար տրվել էին տեսանյութեր, նկարներ եւ որոշ դիդակտիկ պարագաներ:

Արդեն դասաժամին փորձի մասնակիցները նախապատրաստվել էին:

Աշակերտները մեծ ոգևորությամբ ներկայացրին սահիկ, կային որոշ թերություններ, որոնք շտկվեց ուսուցչի և աշակերտներ կողմից:


Ստորև ներկայացված են փորձարկվող աշակերտների գնահատականները:



Փորձարարական դաս-2

Հաջորդ փորձարարական դասը կայացավ 2 շաբաթ անց: Դասի թեման էր «Ավտոմատով կարկ վարելու հիմնական դիրքերը»: Դարձյալ նույն աշակերտները

ստացան հանձնարարություն ուսումնասիրել ավտոմատով կրակելու հմտությունները: Ստացան համապատասխան դիդակտիկ նյութեր, ինչպես նաև տեսադասեր: Դասի ժամանակ կարճ բանավոր ամփոփվեց նախորդ դասերը, վերհիշեցին անցածը եվ հինգ աշակերտները ներկայացրեցին թեման: Կատարվեցին լրացումներ եվ անցան գործնական աշխատանքին: Դասի վերջում կրկին կատարվեց գնահատում: Հետազոտվող աշակերտների գնահատականները ներկայացված են ստորև:



Եզրակացություն

Այսպիսով, գործնական աշխատանքի ընթացքում ելնելով մեր առաջադրած նպատակից և հիմնական հետազոտության վարկածից, հանգել ենք հետևյալ եզրակացությունների, որ հետաքրքրության խթանումը ՆՁՊ առարկայի հանդեպ բավականին բարդ գործընթաց է, քանի որ այն պայմանավորված է ոչ միայն մանկավարժական գործընթացով, այլև աշակերտի անձնային հատկություններով և հակումներով տվյալ առարկայի հանդեպ: Յուրաքանչյուր աշակերտ չի, որ կարող է արդյունավետ վերջնարդյունքի հասնել ՆՁՊ-ի ոլորտում: Սակայն, միևնույն ժամանակ, պետք է հիշել, որ ՆՁՊ գիտելիքները անհրաժեշտ են մարդուն նաև առօրյա կյանքում: ՆՁՊ հանդեպ հետաքրքրության խթանումը մանկավարժական կարևոր խնդիրներից է, որը գտնվում է ուսուցիչների ուղադրության կենտրոնում: Այս գործընթացը անհրաժեշտ է իրականացնել դիդակտիկ նյութերի կիրառումով: Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում դիտարկվել է այս խնդրի լուծման նոր մոտեցում, որը կայանում է նորարարական մեթոդների կիրառման մեջ: Մասնավորապես, հետազոտական աշխատանքի ընթացքում գործածվել է շրջված դասարան մեթոդը, ինչպես նաև համագործակցությունը դասի ընթացքում ուսուցիչ- աշակերտ և աշակերտ-աշակերտ ձևաչափով, դիդակտիկ նյութերի կիրառումը, ինչպես նաև գործնական աշխատանքների լայն կիրառությունը համագործակցության պայմաններում: Նշված մեթոդների կիրառությունը զգալի դրական արդյունքներ է տվել հետազոտական դասերի ընթացքում՝ բավականին մեծ հետաքրքրություն խթանելով աշակերտների մոտ: Երբ արդեն աշակերտը ունի որոշակի գիտելիքներ թեմայից, ավելի ուղադիր է, արագ է ընկալում թեման և հետաքրքրությունը ավելի մեծ է:

Գրականություն

1. nuaca.am
2. <https://lib.armedu.am/>
3. Актуальные вопросы формирования интереса в обучении / Подред. Г. И. Щукиной. М.: Просвещение, 1984
4. Белкина А.С. Ситуация успеха. Как ее создать. М.: Просвещение, 1991
5. Ryback, D., & Sanders, J. (1980). Humanistic versus traditional teaching styles and student satisfaction. *Journal of Humanistic Psychology*, 20(87), 87-90
6. The flip: Turning a classroom upside down, *Washington Post*, 4. June, 2012.

Առարկա ՆՁՊ	Ամսաթիվ	Կիսամյակ 2-րդ	դասա րան 10-րդ
Խմբի բացվածքը	Աղջիկ 7 տղա 13		
Թեմա	Կրակոցի երևույթը և գնդակի թռիչքը		
Օգտագործ վող Նյութեր	Պրոկյեկտոր, դասագիրք, պլակատ, ԿԱ-74 ինքնաձիգ		
Ամբողջակ ան պատկեր	Նախորդ դասերից սովորողները արդեն ծանոթ են ԿԱ-74 ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների կառուցվածքին :		
Դասի Նպատակը	Կարողանան դնել նշանոցը և փոխադրիչը, հասկանան նշանոցի աշխատանք ցկզբունքը:		
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսնցումը տեղի ունեցավ		
Վերջնարդյ ունք	Սովորողը պետք է կարողանա բացատրել փողի և նշանոցի նշանակությունը գնդակի թռիչքի ժամանակ:		
Ուսուցչի ընթացիկ թիրախներ	զարգացման	Նպատակներին ռազմավարություն	հասնելու
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում		Նախատեսում եմ խմբային աշխատանք՝ արձանագրելով թե յուրաքանչյուր խմբի, թե սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան	

<p>Ավարտ /5ր/</p>	<p>կատարած աշխատանքները:</p> <p>Պարզաբանում են անհասկանալի հարցերը և կատարում կատարված առաջադրանքի ուղղում:</p>	<p>Ստուգում է աշխատանքները և կատարում գնահատում:</p> <p>Հարցերի միջոցով կատարում ամփոփում և պատասխանում հարցերին:</p>		
-------------------	---	---	--	--

Դասապլան 2

Առարկա ՆՁՊ	Ամսաթիվ	Կիսամյակ 2-րդ	դասա րան 10-րդ
Խմբի բացվածքը	Աղջիկ 7 տղա 13		
Թեմա	Ավտոմատով կարկ վարելը		
Օգտագործ վող Նյութեր	Պրոկյեկտոր, դասագիրք, պլակատ, ԱԿ-74 ինքնաձիգ		
Ամբողջակ ան պատկեր	Նախորդ դասերից սովորողները արդեն ծանոթ են ԱԿ-74 ինքնաձիգին :		
Դասի Նպատակը	Կարողանան դնել նշանոցը և փոխադրիչը, հասկանան հավասար նշանահատիկի սկզբունքը:		
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ		
Վերջնարդյ ունք	Սովորողը պետք է կարողանա լիցքավորի զենքը, վորցնի հավասար նշանահատիկ և ձգի ձգանը:		
Ուսուցչի ընթացիկ թիրախներ	գարգացման	Նպատակներին ռազմավարություն	հասնելու
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում		Նախատեսում եմ խմբային աշխատանք՝ արձանագրելով թե յուրաքանչյուր խմբի, թե սովորողներից յուրաքանչյուրի դիսամախկան	

Գործողության ունենք (Ժամ/տևող ություն)	Ուսումնական գործունեության ունեն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն ունեն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
<p>Մուտք ներկայացրեց/3ր/</p> <p>սկիզբ/5-7ր/</p> <p>Ընթացք /25-30ր/</p>	<p>Աշակերտները տալիս են անհասկանալի հարցերը, Լսում պատասխանները, անհրաժեշտության դեպքում տեսրում կատարում նշումներ:</p> <p>Լսում և կատարում հանձնարարություններ:</p>	<p>Հարցերի փորձում նախորդ անցածը միջոցով հիշեցնել դասերի</p> <p>Նոր նյութի հաղորդում: Բացատրում է հանձնարարությունը, շրջում դասարանում, հետևում աշակերտների աշխատանքին, անհրաժեշտության դեպքում տալիս համապատասխան ուղղությունը:</p>	<p>Ի՞նչ դիրքեր գույություն ունեն հրաձգության համար:</p> <p>Ի՞նչ է նշանակում հավասար նշանահատիկ:</p> <p>Ի՞նչ սկզբունքով է կատարվում նշանառությունը:</p> <p>Երբ է անմիջապես դադարեցվում հրաձգությունը:</p>	

<p>Ավարտ /5ր/</p>	<p>Աշակերտները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները:</p> <p>Պարզաբանում են անհասկանալի հարցերը և կատարում կատարված առաջադրանքի ուղղում:</p>	<p>Ստուգում աշխատանքները կատարում գնահատում:</p> <p>Հարցերի միջոցով կատարում ամփոփում և պատասխանում հարցերին:</p>	<p>Ե և</p>	
-------------------	---	---	----------------	--